


ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՈՎՍԵՓ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼՅԱՆ (1887—1961)



Փետրվարի 2-ին վախճանվեց արևելագիտության ակադեմիկոս ղեմաբերից մեկը, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, բաղձավատակ գիտնական Հովսեփ Աբգարի Օրբելյանը:

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելյանը ծնվել է Քութայիսի քաղաքում, 1887 թվականի մարտի 8-ին (20-ին):

Քիֆլիսում ավարտելով գիմնազիան, 1904 թվականին նա ընդունվել է Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը: Դեռևս ուսանողական նստարանից նա աչքի է ընկել լեզվաբանության, հնագիտության և արվեստագիտության հանդեպ հետաքրքրություններ և սիրով: 1906 թվականից սկսած նա մասնակցել է Անիի պեղումներին և Ն. Մառի բացակայության ժամանակ ղեկավարել հնագիտական արշավախումբը:

1911 թվականին Հ. Օրբելյանը փայլուն կերպով ավարտել է Պետերբուրգի համա-

լսարանի երկու ֆակուլտետ: Նույն թվականին, Ռուսական Գիտությունների ակադեմիան նրան գործուղել է Թուրքիա՝ ուսումնասիրելու Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի հայկական, ուրարտական և սելջուկյան հուշարձանները: Դրա հետ միասին նա ուսումնասիրել է հայ և քուրդ բնակչության կենցաղն ու բարբառները և հարուստ նյութերով վերադարձել Պետերբուրգ:

1913 թվականին Հ. Օրբելյանը Պետերբուրգի համալսարանում հանձնել է հայվրացական բանասիրության գծով մագիստրոսական քննություններ և հաջորդ տարվանից այնտեղ աշխատել որպես պրիվատ դոցենտ: Ն. Մառի հետ միասին Հ. Օրբելյանը 1916 թվականին գործուղվել է Վան պեղումներ կատարելու և հայտնաբերել է ուրարտական Սարդուր Բ թագավորի թողած 265 տողանի սեպագիր արձանագրությունը, որը բացառիկ նշանակություն ունի ուրարտագիտության համար: 1918 թվականից, որպես Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր և մի շարք գիտական հիմնարկությունների ու կազմակերպությունների անդամ, նա մասնակցել է արևելագիտական, արվեստագիտական, հնագիտական հիմնարկների աշխատանքներին:

Անխոնջ գիտնականի կազմակերպչական տաղանդն ու եռանդը հանդես են գալիս Պետական էրմիտաժում, որտեղ նա աշխատում է 1920 թվականից: Հ. Օրբելյանի ջանքերով է կազմակերպվել և համաշխարհային հռչակ վայելել էրմիտաժի արևելագիտական բաժինը: 1934—1951 թվականներին նա վարել է Պետական էրմիտաժի գրեկատորի պաշտոնը:

1935 թվականին Հ. Օրբելյանը ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս: Հ. Օրբելյանի բեղմնավոր կյանքի բազմաթիվ էջերը կապված են հայագիտու-

թյան զարգացման, մասնավորապես Հայաստանի գիտության և գիտական օջախների ստեղծման ու գիտական կադրերի պատրաստման հետ: Հ. Օրբելյանը 1938 թվականին ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահ:

1943 թվականին Երևանում հիմնվեց Հայաստանի գիտական մտքի խոշոր կենտրոնը՝ Գիտությունների ակադեմիան: Նորաստեղծ ակադեմիայի առաջին պրեզիդենտը ընտրվեց Հ. Օրբելյանը:

Հանձին Հ. Օրբելյանի, հայագիտությունը կորցրեց փայլուն տաղանդի և գիտական բացառիկ սուր մտքի տեր հետազոտողի, անձանձրույթ ուսանողի, գիտության մեջ առաջադեմ, կյանքում անկեղծ և անմիջական և հայրենասեր գիտնականի:

Հովսեփ Օրբելյանի պայծառ կերպարը միշտ վառ կմնա ընդհանրապես գիտության մշակների և ի մասնավորի հայ մշակույթի վաստակավորների շարքում:

Հարգանք մեծ գիտնականի հիշատակին:

